ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

ՀՐԱՄԱՆ

21 հունիսի 2021 թվականի N ԱԿ 639 - Ա

ԻԳԻԹ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ-ՏԵՍՈՒՉ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 16-րդ մասով, 17-րդ հոդվածի 1-ին մասի 1-րդ կետով, 39-րդ հոդվածի 6-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի N 1554-Ն որոշման հավելվածի 147-րդ և 151-րդ կետերը, Հայաստանի Հանրապետության առաջին փոխվարչապետի 2018 թվականի դեկտեմբերի 12-ի N 441-Ն որոշման հավելվածի 14-րդ կետը, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 755-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 19-րդ կետի 7-րդ և 8-րդ ենթակետերը և Իգիթ Հակոբյանի 2021 թվականի հունիսի 18-ի անձնական դիմումը.

հրամայում եմ.

1. Իգիթ Հակոբյանին 2021 թվականի հունիսի 22-ին նշանակել Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի աշխատանքային օրենսդրության վերահսկողության վարչության պետ (ծածկագիր 66-27.10-Ղ3-1)՝ 12 ամիս փորձաշրջանով:

2. Իգիթ Հակոբյանի փորձաշրջանը համակարգող նշանակել Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի հարավային տարածքային կենտրոնի պետ (ծածկագիր՝ 66-28.5-Ղ3-1) Մուշեղ Մարգարյանին:

0047 ՀՀ, ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
Հեռ. (374-10) 65-05-53 Էլ. փոստ՝ info@hlib.am
www.hlib.am
Թեժ գիծ՝ 8107

3. Իգիթ Հակոբյանի պաշտոնային դրույքաչափը սահմանել «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան:

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ
ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՂԵԿԱՎԱՐ

Recoverable Signature

X

ՀԱԿՈԲ ԱՎԱԳՅԱՆ

Signed by: AVAGYAN HAKOB 3912770166

Հ. ԱՎԱԳՅԱՆ

2021թ. Հունիսի 21
Երևան

0047 ՀՀ, ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
Հեռ. (374-10) 65-05-53 Էլ. փոստ՝ info@hlib.am
www.hlib.am
Թեժ գիծ՝ 8107